# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2024թ. դեկտեմբերի 3 -ին, N 524 -Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՆԱԿԻ Գ.ՉԱՈՒՇԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 164-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Վ. Մարտիրոսյանի 2024 թվականի նոյեմբերի 29-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշնակի Գ.Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վահրամ Մարտիրոսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ 2024 թվականի դեկտեմբերի 2-ից 2025 թվականի հունվարի 9-ը ներառյալ:

2. Վահրամ Մարտիրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Աշնակի Գ.Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Աշնակի Գ.Չաուշի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող Լուսինե Գասպարյանի վրա:

3. Վահրամ Մարտիրոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հունվարի 10-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 12/3/2024 13:21:05 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ